



Prof. Dr. Ingolf Pernice



Prof. Dr. Gagik Harutyunyan

## ՎԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԱՐՄԱՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՌԱԿԱՆ Է ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Եվրամիության երկրների համար իրավական զարգացումներն առաջիկայում խորհրդանշվելու են նոր փուլով՝ իրողություն է դառնալու Միության Սահմանադրության եւ սահմանադրական Պայմանագրի ընդունումը, որոնք խորհրդանշում են իրավական գլոբալացման եւ արժեհամակարգային մոտեցումների նոր որակ:

Ելնելով հարցի իրատապությունից, ընթերցողներին ենք ներկայացնում ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Ջարությունյանի եւ Եվրոպական Սահմանադրության մշակման մասնագիտական խմբի գերմանացի անդամ, պրոֆեսոր Ինգոլֆ Պերնիցեի ինտերնետային գրույցից որոշ մտքեր այդ թեմային առնչվող հարցերի մասին:

**Գ. 7. - Ջարգելի պրոֆեսոր, ամառարկելի իրողություն է, որ Եվրոպական Միությունը հասել է տնտեսական եւ արժեհամակարգային ինտեգրման այնպիսի աստիճանի, որ պահանջվում է նաև համարժեք իրավական միջավայր: Այսուհանդերձ, ինչով եք Դուք արդարացնում Եվրոպական վերաբետական Սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը:**

**Ի. Պ. -** Եվրոպական միության պայմանագրերն արդեն ունեն վերազգային հանրային հեղինակություն, դրանք կատարում են Սահմանադրության գործառույթներ, բայց չեն դիտվում որպես Սահմանադրություն: Մարդկա և պարզ տեքստի կարիք ունեն, և Սահմանադրական խորհուրդը (հանձնաժողովը) այժմ փորձում է գոյություն ունեցող առաջնային իրավունքի դրույթներն ի մի բերել Եվրոպական միության Սահմանադրության տեսքում, համատեղելով Միությունն ընդլայնմանը նախապատրաստելու, ներառյալ՝ Հիմնարար իրավունքների խարտիան, ժողովրդավարական վերահսկողությանը հասնելու և իր հաստատություններն ավելի արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունը:

**Գ. 7. - Սահմանադրագիտության ներկա զարգացումներն անխուսակելիորեն պետք է հաշվի առնել այս յուրահատուկ իրավական փաստաթղթի մշակման ժամանակ: Այդ առումով ի՞նչ նոր առանձնահատկություններ ունի սույն Սահմանադրությունը:**

**Ի. Պ. -** Այն պետք է հասկանալի լինի Միության քաղաքացիների համար, Հիմնարար իրավունքների խարտիայի տեսքով ներառի ընդհանուր արժեքներ, այն պետք է համապատասխանի ժողովրդավարության և թափանցիկության պահանջներին: Պետք է հստակեցվի, որ Միությունը գործում է իր քաղաքացիների և ոչ (միայն) իր անդամ պետությունների համար:

**Գ. 7. - Այսուհանդերձ, ինձ հետաքրքրում է այն հարցը, թե ի՞նչ հիմնարար սկզբունքների վրա է հիմնվում սույն Սահմանադրությունը:**

**Ի. Պ. -** Հուսով եմ, Սահմանադրությունն ավելի հստակ է սահմանում, որ Միության հիմնական սկզբունքներն են մարդու իրավունքների և իրավական օրենքի գերակայության, ժողովրդավարության, սոցիալական հանդուրժողականության և կայուն զարգացման սկզբունքները:

**Գ. 7. - Նկատի ունենալով, որ երիտասարդ ժողովրդավարության երկրներում հաճախ աղճատված է ընկալվում առանցքային նշանակության մի հարց, ես կցանկանայի Զեր մեկնարանությունը լսել, թե**

**ինչպես է սույն Սահմանադրությամբ սահմանվում և իրականացվում «մարդու իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ» դրույթը:**

**Ի. Պ. - Հիմնարար իրավունքների խարտիան կլինի ուղղակի համապարտադիր օրենք, և անհատները կունենան ազգային դատարաններում, ինչպես նաև Արդարադատության Եվրոպական դատարանում իրենց խախտված իրավունքների իրավական պաշտպանության միջոցները: Խարտիայում թվարկված հիմնարար իրավունքները պետք է գործն նաև որպես ղեկավար սկզբունքներ Եվրոպական օրենսդրության և քաղաքանության համար և պետք է հաշվի առնվեն Եվրոպական իրավունքի բոլոր դրույթների կիրառման ժամանակ:**

**Գ. Դ. – Զեր կարծիքով՝ ի՞նչ դեր կունենա սույն Սահմանադրությունը Եվրոպական միության անդամ պետությունների և ոչ անդամ պետությունների սահմանադրական զարգացումների բնագավառում:**

**Ի. Պ. - Այս որոշ ներդաշնակեցնող արդյունք կունենա անդամ պետությունների սահմանադրական զարգացումներում, ընդհանուր արժեքները և հիմնարար իրավունքները, չնայած որ դրանք ուղղակիորեն պարտադիր չեն անդամ պետությունների համար, այնուամենայնիվ, կողմնորոշիչ դեր կունենան հասկանալու՝ թե որն է համարվում Միությունում ընդունված չափանիշը: Ոչ անդամ պետությունների համար ննան ազդեցությունը կլինի անուղղակի և ավելի մեծ կշիռ կունենա, եթե ննան պետությունները քննարկեն Միությանը անդամակցելու հարցը:**

**Գ. Դ. – Ես չափազանց կարեւորում եմ անմիջական ժողովրդավարության հնարավորությունների լիարժեք օգտագործումը սահմանադրահրավական հարաբերություններում եւ կցանկանայի Ձեզանից իմանալ, թե այդ հարցին ինչ մոտեցումներ կան Զեր կողմից տարվող աշխատանքների համատեքստում, եւ ինչպես եք Դուք տեսնում սահմանադրական արդարադատության իրավունքի իրականացումը նոր սահմանադրական զարգացումների համատեքստում:**

**Ի. Պ. - Պետք է նշել, որ իր գոյության սկզբից Եվրոպական միությունը (կամ Յամայնքը) ձևավորվել է որպես համայնքային իրավունք: Սա նշանակում է, որ այն ստեղծվել է օրենքով (պայմանագրերով), այն գործել է իրավական միջոցներով, այն կաշկանդված է օրենքով և հետևում է արդարադատության գաղափարին:**

**Ես Եվրոպական պայմանագրերը տեսնում եմ որպես Միության ապագա Սահմանադրություն, որպես «բազմանկարդակ սահմանադրական համակարգ», և դրա զարգացման ընթացակարգերն այսօր նշանակում են Եվրոպական սոցիալական պայմանագրի ընդլայնում և վերանայում:**

**Սահմանադրական արդարադատությունը հիմնված է սույն Սահմանադրության պայմանագրային օրինականության եւ նոր (Սահմանադրական) պայմանագրի վավերացման համար քաղաքացիների ենթարկվող համաձայնության վրա: Քաղաքացիները հետևում են իրենց ներկայացուցիչների միջեւ ծավալված քննարկումներին (քանակցություններին) և այնուհետև Միջկառավարական կոնֆերանսում տեղի ունեցող բանակցություններին: Նախաձեռնան ընթացակարգերի հրապարակայնությունը, որն ապահովում է ինտերնետով և որով հնարավորություն է ընձեռվում ներկա և ապագա անդամ պետությունների բոլոր քաղաքացիներին ակտիվորեն մասնակցել քննարկումներին, կարևոր և խոստումնալից միջոց է ապահովելու, որպեսզի այդ գործընթացն արդյունք ունենա, ինչով եւ «սահմանադրական արդարադատությունը» կապահովվի այնպես, ինչպես՝ երբեք:**

**Գ. Դ. – Ծնորհակալություն, պրոֆեսոր, համոզված եմ, որ մեր համագործակցությունն արդյունավետ շարունակություն կունենա:**

**Գ. Դ. – Զեր կարծիքով՝ ի՞նչ դեր կունենա սույն Սահմանադրությունը Եվրոպական միության անդամ պետությունների և ոչ անդամ պետությունների սահմանադրական զարգացումների բնագավառում:**

**Ի. Պ. - Այս որոշ ներդաշնակեցնող արդյունք կունենա անդամ պետությունների սահմանադրական զարգացումներում, ընդհանուր արժեքները և հիմնարար իրավունքները, չնայած որ դրանք ուղղակիորեն պարտադիր չեն անդամ պետությունների համար, այնուամենայնիվ, կողմնորոշիչ դեր կունենան հասկանալու՝ թե որն է համարվում Միությունում ընդունված չափանիշը: Ոչ անդամ պետությունների համար ննան ազդեցությունը կլինի անուղղակի և ավելի մեծ կշիռ կունենա, եթե ննան պետությունները քննարկեն Միությանը անդամակցելու հարցը:**

**Գ. Դ. – Ես չափազանց կարեւորում եմ անմիջական ժողովրդավարության հնարավորությունների լիարժեք օգտագործումը սահմանադրահրավական հարաբերություններում եւ կցանկանայի Ձեզանից իմանալ, թե**

այդ հարցին ինչ մոտեցումներ կան Զեր կողմից տարվող աշխատանքների համատեքստում, եւ ինչպե՞ս  
եք Դուք տեսնում սահմանադրական արդարադատության իրավունքի իրականացումը նոր  
սահմանադրական զարգացումների համատեքստում:

Ի. Պ. - Պետք է նշել, որ իր գոյության սկզբից Եվրոպական միությունը (կամ Եամանքը) ձևավորվել է որպես համայնքային իրավունք: Սա նշանակում է, որ այն ստեղծվել է օրենքով (պայմանագրերով), այն գործել է իրավական միջոցներով, այն կաշկանդված է օրենքով և հետևում է արդարադատության գաղափարին:

Ես Եվրոպական պայմանագրերը տեսնում եմ որպես Միության ապագա Սահմանադրություն, որպես «բազմանակարդակ սահմանադրական համակարգ», և դրա զարգացման ընթացակարգերն այսօր նշանակում են Եվրոպական սոցիալական պայմանագրի ընդլայնում և վերանայում:

Սահմանադրական արդարադատությունը հիմնված է սույն Սահմանադրության պայմանագրային օրինականության եւ նոր (Սահմանադրական) պայմանագրի վավերացման համար քաղաքացիների ենթադրով համաձայնության վրա: Քաղաքացիները հետևում են իրենց ներկայացուցիչների միջեւ ծավալված քննարկումներին (քանակցություններին) և այնուհետև Միջկառավարական կոնֆերանսում տեղի ունեցող բանակցություններին: Նախաձեռնան ընթացակարգերի հրապարակայնությունը, որն ապահովում է ինտերնետով և որով հնարավորություն է ընձեռվում ներկա և ապագա անդամ պետությունների բոլոր քաղաքացիներին ակտիվություն նախակցել քննարկումներին, կարևոր և խոստումնալից միջոց է ապահովելու, որպեսզի այդ գործընթացն արդյունք ունենա, ինչով եւ «սահմանադրական արդարադատությունը» կապահովվի այնպես, ինչպես՝ երբեք:

Գ. Ր. – Ծնորհակալություն, պրոֆեսոր, համոզված եմ, որ մեր համագործակցությունն արդյունավետ շարունակություն կումենա: